

ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում եվրահետադրման գործընթացը ամբողջությամբ դեռևս ընկալված չէ: Եվ քաղաքական ուժերի, և հասարակության մեծամասնության համար եվրահետադրումը, եվրոպական քաղաքականությունը, միասնական եվրոպան ավելի շատ տեղեկատվական բողոքակցական հնչող արտահայտություններ են, քան գործընթաց, որի մասնակիցն է պետությունը և որը լուրջ հեռանկարներ է խոստանում Հայաստանի համար: Ավելին՝ ի պաշտոն «եվրոպական արժեքային համակարգի կողմնակիցներ» համարվող շատ գործիչներ՝ կախված քաղաքական կոնյունկտուրայից, ժամանակ առ ժամանակ իրենց թույլ են տալիս հայտարարել, որ Հայաստանի համար որպես եվրոպայի այլընտրանք՝ կարող է համարվում իսլամական աշխարհը: Սակայն մեծ կարծիքների գոյությունը պայմանավորված չէ միայն քաղաքական նպատակահարմարությամբ: Հասարակության մի ստվար հատված ևս եվրոպան ու եվրահետադրումը չի ընկալում որպես այլընտրանք չունեցող զարգացման ուղղություն: Իսկ դա իր հերթին մեծապես պայմանավորված է նույն քաղաքական ուժերի ու գործիչների գործունեությամբ՝ եվրոպական արժեքներն ու Հայաստանը այդ արժեքներով հարստացնելու գործընթացով: Քանի որ այս թեմայով հասարակական-քաղաքական քննարկումներում գերիշխում են առավելապես դեկարատիվ հայտարարությունները: Եվրահետադրման մասին և դրական, և քննադատական կարծիքները մի դեպքում՝ գեղեցիկ ձևակերպումներից, մյուս դեպքում՝ «ազգային մեթափիտեոսի անհարիր արժեքների թվարկումից» այն կողմ չեն անցնում:

Այս օրերին Հայաստան-Եվրոպա հարաբերություններում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք գրեթե ֆորմալ առումով նոր որակ են հաղորդելու եվրոպայի հետ հարաբերություններին: Մայիսի 7-ին Պրահայում կայանալու է Եվրամիության «Արևելյան գործընկերության» ծրագրի մասնակից երկրների ղեկավարների գագաթաժողովը: Հայաստանում և հասարակությունը, և քաղաքական ուժերը լայն իմաստով անտարբեր են և՛ այդ իրադարձության, և՛ դրա հնարավոր հետևանքների նկատմամբ: Բոլորի ուշադրության կենտրոնում առաջիկայում կայանալիք Երևանի ավագանու ընտրություններն են, որոնք, ի դեպ, փոխառնվել են եվրոպական երկրներից:

Լուկաշենկոյին չեն սպասում

Մայիսի 7-ին Պրահայում կայանալիք ԵՄ «Արևելյան գործընկերության» ծրագրի մասնակից երկրների գագաթաժողովի շուրջ արդեն բավականին հետաքրքիր իրադարձություններ են զարգանում, մասնավորապես՝ այդ գագաթաժողովին Մոլդովայի նախագահ Վլադիմիր Վորոնչինի և Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի մասնակցության հետ կապված: Երկու երկրներն էլ ծրագրի մասնակիցներ են: Մոլդովայում արդեն պաշտոնապես հայտարարել է, որ Վորոնչինի փոխարեն երկիրը կներկայացնի վարչապետ Ջինաիդա Գրեշենյայան, ինչը պայմանավորված է Մոլդովայի լաված ներքաղաքական վիճակով: Ինչ վերաբերում է Եվրոպայում որպես բռնապետ ընկալվող Լուկաշենկոյին, ապա Բրյուսելում երկար ժամանակ չէին կողմնորոշվում նրան հրավիրելու հարցում: ԵՄ-ն բազմիցս ընդգծել է, որ գագաթաժողովին մասնակցելու հրավերներ ուղարկվում են երկրներին, ոչ թե այդ կոնկրետ պաշտոնատար անձանց: Այդուհանդերձ, ներկայումս ԵՄ նախագահող երկրի Չեխիայի ԱԳ նախարար Կարլ Շվարցներեթը անցյալ շաբաթ մեկնեց Մինսկ և Լուկաշենկոյին հրավեր հանձնեց: Սակայն հենց նույն օրը Շվարցներեթի ղեկավարող Չեխիայի նախագահ Վաչլավ Կլաուսը, հայտարարեց, որ ինքը չի պատրաստվում սեղմել Բելառուսի նախագահի ձեռքը: Լուկաշենկոն էլ իր հերթին ԵՄ-ին կոչ է արել հստակեցնել ցանկանում են իրեն տեսնել մայիսի 7-ի գագաթաժողովում, թե՛ ոչ: Պատասխան, որպես այդպիսին, իհարկե, չի եղել: Սակայն դատելով ինչո՞ր հայտարարություններից՝ Բելառուսի նախագահին Եվրոպայում չեն սպասում: ԵՄ արտաքին քաղաքականության հարցերով նախագահ հավիեր Սոլանան կարծիք է հայտնել, որ Լուկաշենկոն գագաթաժողովին չի մասնակցի: Իսկ թե մայիսի 7-ին ով կներկայացնի Բելառուսը պրահայան գագաթաժողովին, ըստ Սոլանայի, պարզ կդառնա ամենավերջին պահին:

Այս տարվա մարտի 20-ին Բրյուսելում կայացած գագաթաժողովի ընթացքում Եվրամիության անդամ 27 երկրների ղեկավարները հավանություն տվեցին Արևելյան գործընկերության ծրագրին, որը նախատեսում է սերտացնել ԵՄ ռազմավարական համագործակցությունը հետխորհրդային վեց պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Բելառուսի հետ:

Շուրջ մեկ ամիս առաջ հայաստանյան լրատվամիջոցներով տարածված այս տեղեկատվությունը հայաստանցիներին կարծես այնքան էլ չհետաքրքրեց: Պատճառները տարբեր են. նախ Հայաստանի հասարակությունը (այդ թվում՝ հասարակության ակտիվ հատվածը) կենտրոնացած է մեր ներքին խնդիրների վրա, և երկրի սահմաններից դուրս կատարվող զարգացումները մեզ այնքան էլ չեն հետաքրքրում: Երկրորդ պատճառը տեղեկատվության պակասն է: Գաղտնիք չէ, որ անգամ պետական պաշտոնյաների մի ստվար մասը չգիտի՝ որն է Եվրամիության և Եվրոպայի խորհրդի տարբերությունը: Իսկ այդ բնագավառում արձանագրված վերջին զարգացումների, եվրոպական կառույցների, նրանց հետ համագործակցության և այդ համագործակցության ընձեռած հնարավորությունների մասին շատերը նույնիսկ պատկերացում չունեն: Մինչդեռ, եթե ուղղակի հայտարարվեր, որ Հայաստանի քաղաքացիները կարող են հեշտությամբ Եվրամիության երկրների մուտքի թույլտվություն՝ վիզա ստանալ, մեկնել, օրինական կարգով աշխատել ԵՄ մեկնալու երկրում, այդ լուրը առավել տիպիկ կլիներ բոլորի ուշադրության կենտրոնում սկսած թշակառուներով, վերջացած ուսանողներով: Մինչդեռ նույն «Արևելյան գործընկերության» ծրագիրը նման հնարավորություն նախատեսում է...

Առաջին քայլերը
Ժամանակագրական կտրվածքով Եվրամիություն-Հայաստան հարաբերություններն անցել են զարգացման մի քանի փուլերով: 1999 թվականից ուժի մեջ մտավ ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիրը: Այն նպատակ ուներ նպաստել ժողովրդավարության, օրենքի իշխանության և մարդու իրավունքների ոլորտում առաջընթացին, ինչպես նաև՝ տնտեսական բարեփոխումներին և առևտրի ազատականացմանն ուղղված քայլերին: Ավելի ուշ Եվրամիությունը սկսեց իրականացնել «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագիրը, որը նպատակաուղղված էր թվով 17 երկրների հետ (այդ թվում՝ Մերձավոր Արևելքի և աֆրիկյան երկրների) գործընկերության զարգացմանը: Երկրներից յուրաքանչյուրի հետ կնքվեց Գործողությունների ծրագիր: Հայաստանի գործողությունների ծրագիրն ընդունվեց 2006թ. նոյեմբերին: Այդ ժամանակվանից ի վեր ԵՄ-ն նյութական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերել մեր Հայաստանին տնտեսական, իրավական, կրթական, սոցիալական և այլ ոլորտներում:

Արևելյան գործընկերության մասին
Եվ այսպես, ինչպես արդեն նշեցինք, Եվրոպան Հայաստանին առաջարկեց հարևանից վերածվել գործընկերոջ:



«Արևելյան գործընկերության ծրագիրն» ավելի սերտ համագործակցություն է ենթադրում, և շրջանակն էլ ավելի նեղ է: Կարելի է ասել, այն նախատեսված է այն երկրների համար, որոնք հետագայում կարող են դառնալ ԵՄ անդամ (նշենք, որ ԱԳԾ նախաձեռնողներից մեկը՝ Լեհաստանը, ինքն էլ ԵՄ համեմատաբար նոր անդամ է): Իհարկե, դա հազիվ թե տեղի ունենա մոտ ապագայում: Ասվածի ավելի պատկերավոր վկայությունն է Եվրահանձնաժողովի հարևանության եվրոպական քաղաքականության բաժնի տնօրեն Ջոն Օ'Ռուրկիի հայտարարությունը, ըստ որի՝ «Արևելյան գործընկերության» նախաձեռնությունը «հետևա-



ազդեցությունը տարածաշրջանում ստեղծելով, այսպես կոչված, «Եվրոպայի Անկախ պետությունների համագործակցություն»:

Հայաստանը՝ գործընկերոջ կարգավիճակում

Հայաստանն արդեն ընդունել է ԵՄ առաջարկը, ինչպես առաջարկ ստացած մյուս երկրները: Իսկ ի՞նչ ենք ստանում մենք դրանից: Թվում է պատասխանը պարզ է: Ինչպես արդեն նշեցինք՝ արտոնյալ պայմաններ՝ կապված անցագրային ռեժիմի, աշխատանքի և ապրանք-ծառայությունների եվրոպական շուկա դուրս գալու հետ: Հատկանշական է,

ԵՄ-ի աջակցությամբ ՀՀ-ում իրականացվել և ներկայումս իրականացման փուլում են մի շարք ծրագրեր՝ անենատարբեր ոլորտներում: Տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումներին աջակցելու նպատակով հիմնադրվել և գործում է Քաղաքական և իրավական աջակցության հայ-եվրոպական կենտրոնը (AEPLAC): Ընթացքի մեջ է 10 տարի տևողությամբ և 100 մլն եվրո ընդհանուր արժեքով ԱՏՆԻ անվտանգության ծրագիրը: Իսկ Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակներում 2007-2010թթ. ՀՀ-ի համար նախատեսված է 98.4 մլն եվրո:

Եվրոպական հարևանության ծրագրով նախատեսված գործողությունների ծրագրի ընդունումից ի վեր, 2006թ. համեմատությամբ ԵՄ-Հայաստան ապրանքային և ծառայությունների առևտրի արտաքին շաղկապում արտաքին առևտրաշրջանառության մոտ 40 տոկոսը բաժին է ընկնում ԵՄ-ին:

«Նազմավարական կարևորություն» ունեն ԵՄ-ի համար: ԵՄ-ն մտադիր է խթանել տարածաշրջանում կայունության և բարեկեցության հաստատումը և հեռանկարում ավելի սերտ քաղաքական և տնտեսական ինտեգրման հասնել: Մոտ ապագայում նախատեսվում է գործընկերության պետությունների հետ ստորագրել կառուցողական պայմանագրեր, որոնք էլ կսահմանեն համագործակցության հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները: Այս ամենի դիմաց Եվրոպան իր հարևաններից ակնկալում է բարեփոխումներ ժողովրդավարության և շուկայական տնտեսության բնագավառներում: Հարկ է նշել, որ այս նախաձեռնությունը դուր եկավ ոչ բոլորին: Առաջին հերթին՝ Ռուսաստանին: Իսկ ի՞նչ է շահում Եվրոպան գործընկերային հարաբերություններ հաստատելով անցումային փուլում գտնվող, ամենևին ոչ հասուն ժողովրդավարությամբ երկրների հետ: Ներկայումս Եվրամիության նախագահող երկրի Չեխիայի ԱԳ նախարար Կարլ Շվարցներեթի կարծիքով լավ գործընկերներ: «Սա հաղթանակ է ոչ միայն շահագրգիռ պետությունների, այլև, ամենից գառ, Եվրոպայի համար»,- հայտարարել է նա: ՌԴ-ն գտնում է, որ Եվրոպան այս նախաձեռնությամբ փորձում է թուլացնել իր

Այս հավելվածը պատրաստված է Եվրոպական հանձնաժողովի օժանդակությամբ: Եվրահանձնաժողովը պատասխանատվություն չի կրում հավելվածում եղած տեղեկատվության համար: Եվրահանձնաժողովի և Եվրոպական համայնքի այլ մարմինների ու կառույցների տեսակետները կարող են չհանդիսանալ արտահայտված կարծիքների հետ:

Ապրիլի 8-ին ՀՀ ԱԺ-ում Հայաստան-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի (ԽՀՀ) 10-րդ նիստի ժամանակ ընդունվեց համատեղ փաստաթուղթ, որը ներառում է ՀՀ-ԵՄ հարաբերություններին, տնտեսական քաղաքականությանը, տարածաշրջանային խնդիրներին, ԼՂ հակամարտությանը և ՀՀ-ի ներքին իրավիճակին վերաբերող հիմնադրույթներ: Նիստին մասնակցելու նպատակով ՀՀ էր ժամանել ԵՄ խորհրդարանական պատվիրակությունը՝ ԽՀՀ համանախագահ Մարի Աճն Իզլեր Բեզենի գլխավորությամբ:

ՀՀ-ԵՄ ԽՀՀ համանախագահ Ավետ Ադրոնցի կարծիքով՝ այդ հռչակագիրը այս ոլորտում ընդունած փաստաթղթերից բովանդակությամբ ամենահարուստն է և ամենարդյունավետը: Մարի Աճն Իզլեր Բեզենն էլ՝ համեմատելով ԵՄ պատվիրակության և միջազգային այլ պատվիրակությունների գործելակերպը, ընդգծեց, որ իրենց ուշադրության կենտրոնում են գլոբալ հիմնահարցեր՝ տնտեսություն, բնապահպանություն, քաղաքական խնդիրներ, նաև մշակութային ու կրթական հիմնահարցեր: Ըստ նրա, պատվիրակությունը աշխատում է երեք հարևան երկրների՝ Ադրբեյջանի, Հայաստանի և Վրաստանի հետ, և նրա նպատակն է՝ ընդունել որոշումներ, որոնք հնարավորություն կընձեռեն ԵՄ հարևանության քաղաքականության շրջանակներում, մասնավորապես՝ հակամարտությունների կարգավորման խնդրում, լավագույն լուծումներ գտնել: ՀՀ ԱԺ նախագահ Յուլիա Աբրահամյանն էլ այդ նիստի բացման ժամանակ իր խոսքում նշեց, որ 2007թ. Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Գործողությունների ծրագրով «ամրագրվեց ՀՀ-ի և ԵՄ-ի բազմաբնույթ համագործակցությունը: «Արևելյան գործընկերության» նախաձեռնությունը նոր հեռանկարներ է բացում ՀՀ-ի համար»,- իր խոսքում ասել էր նա:

Տպակցություն է ստեղծվում, սակայն, որ այս իրադարձություններն ու հայտարարությունները ավելի շատ արարողակարգային բնույթ են կրում, քան արտահայտում են ՀՀ-ի եվրաինտեգրման գործընթացի իրական, բովանդակային վիճակը: Թերևս դրա պատճառներից մեկն էլ այն է, որ այս գործընթացի հետ առնչվող գործիչները իրենք թե՛ դրական, թե՛ բացասական գնահատականներում խուսափում են խոսել կոնկրետ ձեռքբերումների կամ բացթողումների մասին: Ասվածի վկայությունն են նաև ՀՀ-ի եվրաինտեգրման գործընթացի, ընդունած համատեղ փաստաթղթի համատեքստում ՀՀ-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ ՀՀ-ի հիմնական քաղաքական ուժերի ներկայացուցիչների գնահատականները:

Արմեն Աշոտյան (ԱԺ ՀՀՀ խմբակցության պատգամավոր)- ՀՀ-ն իր եվրոինտեգրման ճանապարհը դիտարկում է որպես առաջնահերթ ճանապարհներից մեկը արտաքին քաղաքականության մեջ: Հարաբերությունները ԵՄ-ի հետ ունեն բավականին հարուստ փորձ, և բազմաթիվ քայլեր այս ուղղությամբ ձեռնարկվել են: Կարծում են՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունները մեծ պոտենցիալ ունեն նաև առջևում, որովհետև երկկողմանի շահագրգռվածություն կա: ՀՀ-ն շահագրգռված է ԵՄ-ի հետ կապերի հաստատման և խորացման մեջ՝ հաշվի առնելով ԵՄ-ի քաղաքական,

- Քաղաքական ուժերի գնահատմամբ՝ ԱԺ-ում ՀՀ-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի նիստում ընդունված համատեղ փաստաթղթում ավելի շատ իմիտացիոն բնույթ է կրում, քան բովանդակային: Չոր գնահատմամբ՝ այն կարող է դրական առաջընթաց ապահովել ՀՀ-ի համար:

- Ստորագրված ցանկացած փաստաթուղթ որևէ առաջընթաց կարող է ապահովել այն դեպքում, երբ ստորագրող կողմերը, տվյալ դեպքում՝ Հայաստանն, այդ փաստաթղթի գործարկման, կիրառման համար որոշակի ջանքեր կիրառում է: Այսինքն՝ ստորագրված փաստաթղթի՝ ապագայում ձևական կամ ոչ ձևական լինելը ուղղակիորեն կախված է ստորագրողներից: Չետևաբար, նույն քաղաքական ուժերի մոտեցումը, թե այդ փաստաթուղթը

ԻՐԱԿԱՆ, ԹԵ՞ ԻՄԻՏԱՑԻՈՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



տնտեսական կշիռը, իսկ ԵՄ-ն շահագրգռված է ՀՀ-ի՝ որպես տարածաշրջանի կարևոր երկրի հետ համագործակցության մեջ, որովհետև այս տարածաշրջանում ունի իր շահերը, և կարող է այս համագործակցությունը երկկողմանի շահավետ լինել: Այստեղ պոտենցիալն ամբողջությամբ ռեալիզացված չէ, և հույս ունեն, որ «Արևելյան գործընկերության» նոր ծրագիրը նոր մակարդակի կբարձրացնի հարաբերությունները և ՀՀ-ի համար իրաշափ առիթ է որակական ևս մեկ բեկումն մտցնել իր զարգացման մեջ՝ ձգտելով դեպի եվրոպական չափանիշներ:

Արամ Մաֆարյան (ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության քարտուղար)- Իմ կարծիքով, եվրաինտեգրացիայի ուղղությամբ ՀՀ-ի կողմից կատարվող քայլերը կարող էին ավելի ակտիվ լինել: Ծիշտ է՝ մենք համաձայնեցված գրաֆիկով ենք աշխատում ԵՄ-ի հետ «Արևելյան հարևանության» ծրագրով, բայց

ես համոզված եմ, որ մեր գլխավոր առաքելություններից մեկը՝ մեր օրենսդրության համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին, կարող էր տեղի ունենալ ավելի ինտենսիվ: Որովհետև մենք պետք է համեմատվենք երկու բանի հետ. ՌԴ-ԵՄ և ՀՀ-ԵՄ երկխոսության հետ: Տեղեր կան, որ նույնիսկ ԵՄ-ի հետ ՌԴ-ի համագործակցությունը՝ չափանիշերի կիրառման բնագավառում ավելի առաջ է, քան ՀՀ-ն: Իսկ սա արդեն անթույլատրելի է, որովհետև, եթե նույնիսկ մենք ԱՊՀ և ՀԱՊԿ անդամ ենք, և կողմնորոշված ենք դեպի մեր այս բլոկները, ապա մեր գործընկերները նույնպես՝ տարբեր տեմպով, տարբեր չափով շարժվում են եվրոինտեգրման ուղղությամբ: Համոզված եմ, որ մասնավորապես օրենսդրության նույնացման հարցերը կարող էին լինել շատ ավելի արագ և շատ ավելի աշխույժ ձևով:

Ռուզաննա Առաքելյան (ԱԺ ՀՀՀ խմբակցության պատգամավոր)- ՀՀ ԱԺ-ն մինչ այս շրջանը չունի եվրոինտեգրման հարցերով զբաղվող հանձնաժողով: ԱԺ Արտաքին հարաբերությունների հարցերով հանձնաժողովը էր հիմնականում իր մեջ ներառում այդ խնդիրները: Միայն այն, որ մեր ղեկավարությունը ձեռնամուխ եղավ ԱԺ-ում ստեղծելու առանձին հանձնաժողով, կարծում են՝ սա արդեն ոչ միայն առաջ քայլ է, այլ նաև լուրջ մտահոգություն է և ծրագիր՝ եվրոինտեգրման գործընթացները շատ ավելի լուրջ հիմքի վրա դնելու համար: Ինչ վերաբերում է ստորագրված փաստաթղթին, ապա, անկեղծ ասած՝ այն շատ ընդհանրական է: Կարծում են, ավելի

«Ամեն ինչ կախված է ստորագրողներից»

Ասում է «Եվրոպական ինտեգրացիա» հ/կ նախագահ Կարեն Բեքարյանը

թը կարող է լինել զուտ ղեկավարողի և ինչ-որ առաջընթաց չափահովել, ինձ համար իրապես անհասկանալի է, որովհետև նույն ԱԺ խմբակցությունները, որպես օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, ունեն որոշակի հնարավորություններ՝ նպաստելու այդ փաստաթղթի հիմնադրույթների իրականացմանը:

- ՀՀ-ի ժողովրդավարության ներկայիս մակարդակը, մասնավորապես՝ քաղաքատարկայների առկայությունը, որքանով է թույլ տալիս ՀՀ-ին եվրաինտեգրման գործընթացում առաջընթաց արձանագրել: Դա լուրջ խոչընդոտ չէ՞ եվրաինտեգրման ճանապարհին:

գործնական քայլեր անելու համար պետք է այս հուշագիրը մանրամասնեցվի: Բայց պետք է մանրամասնեցվի ոչ թե որպես փաստաթուղթ, այլ արդեն գործունեության մեջ՝ որպես գործնական քայլ:

Ստեփան Սաֆարյան (ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր)- Ցավոք, մինչ այժմ եվրոպական տարբեր կառույցների և ՀՀ-ի համագործակցությունն առավելապես կրել է իմիտացիոն բնույթ, քան բովանդակային: Եվ պատճառը եղել է նաև այն, որ եվրոպական կառույցներն իրենք էլ ավելի շատ



ուշադրություն են դարձրել քաղաքական և ձևական կողմին, ինչը թույլ է տվել ՀՀ-ին խուսաճվել իր պարտավորությունները կատարելու ուղղությամբ, որոնք նաև բխում են ՀՀ շահերից, քանի որ եվրոպական նորմատիվ դաշտն, ըստ էության՝ անենահաջողվածն է բարեկեցիկ երկիր և հասարակություն ունենալու առումով: Երբ տարիներ առաջ ստորագրվեց ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագիրը, մենք՝ իբրև եվրաինտեգրման խիստ շահագրգիռ քաղաքական ուժ, քննադատեցինք՝ մշտելով, որ այդ գործողությունների ծրագրի բազմաթիվ կետեր հիշեցնում են հռչակագրային դրույթներ և բաժակաճառեր առավելապես այնպիսի կարևորագույն հարցերում, ինչպիսիք են՝ կոնֆլիկտների կարգավորումը կամ կոնֆլիկտների դեղի մվազեցումը հասարակությունների տրանսֆորմացիայի գործում... Իսկ մնացած առումներով, եթե անգամ որոշ բաժիններում կան կոնկրետություններ, ապա այս առումով՝ լրջագույն խնդիր մնում է դրանց համակարգում մեկ միասնական կենտրոնից, որը կհետևի ՀՀ-ի կողմից ցանկացած քայլի համապատասխանությանը ստանձնած պարտավորություններին: Բայց պետք է ասել, որ այս երկու դաշտում էլ ձախողում տեղի ունեցավ: Իրականում, արդեն 2 տարի լինելով ԱԺ-ում, ես չտեսա որևէ օրինագիծ, որը քննարկվեր ԵՄ-ին ՀՀ-ի ստանձնած պարտավորությունների տեսանկյունից: Չտեսա անգամ այն դեբատարումը, որը միգուցե պարտավոր էր կատարել ԱԺ Եվրոինտեգրման հարցերով հանձնաժողովը այդ հարցերի կապակցությամբ: Իհարկե, ներքին խոհանոցում աշխատանքային կարգով պարբերակաբար տարբեր էին, այդ թվում՝ հանձնաժողովին որոշ օրենքներ չնակագրելով, որոնց վերաբերյալ նա կարող էր կարծիք հայտնել, մյուս կողմից՝ ԱԺ ղեկավարությունը հանձնաժողովին մեղադրում էր պասիվության, և քանաձեռնողականություն չցուցաբերելու մեջ: Այսինքն՝ այս հարցում խնդիր մնաց փոխադարձ մեղադրանքների դաշտում, իսկ իրականության մեջ տուժեց ՀՀ-ն, որը չկարողացավ թե օրենսդրական ձևակերպումների, թե՛ իրավաիրառական պրակտիկայի տեսանկյունից լիարժեք համապատասխանության գալ եվրոպական չափանիշներին: Մյուս առումներով՝ ինչպես հռչակագրային կային, այդպես էլ մնացին: Պատճառն այն էր, որ եվրոպայում կար մտահոգություն, որ որպես միջանկյալ քայլ շատ ավելի կարևոր է ամրագրել պարզապես քաղաքական կամքը ևս մեկ քայլ առաջ եվրոինտեգրման ճանապարհին քաղաքական հայտարարությունների մակարդակով, և դրանից հետո սկսել իրականացնել հավակնոտ ծրագրեր:

րեր, որովհետև եվրոպան այն ժամանակ մի կողմից՝ վախենում էր ամրագրել և խոստումներ տալ եվրոպական հարևանության գործողությունների ծրագրի շրջանակներում ստորագրած երկրների հավակնությունների կապակցությամբ: Արդյունքում մենք առավելապես ունեցանք ձևական գործընթաց: Այսօր կարծես հասկանում են, օրինակ, Վրաց-ռուսական պատերազմի հետևանքները կամ պատճառները, դրանում տեսնելով նաև եվրոպայի թուլությունը, որը Հարևանության քաղաքականության մեջ ձախողվել էր, քանի որ, ըստ էության, այդ հարևանության քաղաքականությունը չկարողացավ որևէ կերպ նպաստել մնացած փոխաձեռնության կանխմանը: Այն դեպքում, երբ եվրոպան դա հետխորհրդային տարածքում հռչակում էր որպես կարևորագույն գործիք: Սա ուղղակի խոստովանություն էր, որ եվրոպան նաև ինքն է գիտակցում իր ձախողումն այս կտրվածքով, դրա համար գործողության մեջ դրեց Արևելյան գործընկերության ծրագիրը, որի հիմնական նպատակը ռեգիոնալ կոմպոնենտի ամրապնդումն է: Բայց այստեղ էլ համուն արդարության պետք է ասել, որ նախկին ինտեգրման ավելի շատ է պահպանվում նորից: Եթե նույնիսկ դա չլիներ, ապա եվրոպան իսկապես շատ լուրջ խնդիր ունի՝ վերանայելու իր քաղաքականության և կրթական հիմքերը՝ դրանք շահերից տեղափոխելով արժեքների վրա, որոնցով հենց ինքն ուժեղ է: Միայն դրանից հետո մենք կարող ենք խոսել որևէ քաղաքականության արդյունավետության մասին: Այլապես նրանց համար այս տարածաշրջանը կրկին կարևորվելու է ենթադրել և այլ հաղորդակցական միջանցքների տեսանկյունից, արժեքային կոմպոնենտը ստեղծելու է, հասարակությունները արժեքային փոխակերպումներ չեն ապրելու, քաղաքական համակարգերը չեն փոխակերպվելու, և նորից նույն ռիսկերը պահպանվելու են նաև Արևելյան գործընկերության համար: Ես պարտավորությունների չկատարման, ԵՄ-ի հետ գործողությունների ծրագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարման, իսկ ապագայում միգուցե նաև Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարման առումով հայ հասարակությունն ու մնացած հասարակություններն ունենան առավելապես հիասթափություններ, քան ոգևորություն:

Չուփանման Իզլերյան (Հայ Ազգային կոնգրեսի ներկայացուցիչ, Հայաստանում ԵՄ Առևտրի պալատի տնօրեն)

Հայաստանի իշխանության այն մասը, որն առնչվում է այդ ծրագրին, սովորել է միայն արտասանել մի քանի բառակապակցություն՝ «կայուն զարգացում», «ինտեգրում» և այլն: Հայաստանն իր 17 տարվա պատմության մեջ, նույնիսկ պատերազմի տարիներին, եվրաինտեգրումից ավելի հեռու, քան հիմա, չէր եղել: Ինձ թվում է, որ առայժմ Հայաստանի իշխանությունը ԵՄ-ի այդ ծրագրին նայում է ընդամենը գումարային տեսանկյունից, թե իրավաիրառական պրակտիկայի տեսանկյունից լիարժեք համապատասխանության գալ եվրոպական չափանիշներին: Մյուս առումներով՝ ինչպես հռչակագրային կային, այդպես էլ մնացին: Պատճառն այն էր, որ եվրոպայում կար մտահոգություն, որ որպես միջանկյալ քայլ շատ ավելի կարևոր է ամրագրել պարզապես քաղաքական կամքը ևս մեկ քայլ առաջ եվրոինտեգրման ճանապարհին քաղաքական հայտարարությունների մակարդակով, և դրանից հետո սկսել իրականացնել հավակնոտ ծրագրեր:

պես իր մեծագույն դերակատարումն ունի: Ցանկացած հարցում, ասալարեզում, որտեղ կա ժողովրդավարության չափանիշների ոչ լիակատար բավարարում, բնականաբար, դա խոչընդոտ է:

պես իր մեծագույն դերակատարումն ունի: Ցանկացած հարցում, ասալարեզում, որտեղ կա ժողովրդավարության չափանիշների ոչ լիակատար բավարարում, բնականաբար, դա խոչընդոտ է:

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ



ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ